«Դավիթ Անհաղթ»
Բժշկական կենտրոն
ՓԲԸ

Медицинский Центр
„Давид Анахт"
ЗАО

Ք. Երևան, Հ. Ներսիսյան 7. Հեռ.՝ 28 – 63-20

N178

22.09.2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգերի շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հայտնում ենք, որ «Դավիթ Անհաղթ» ՓԲԸ-ի կողմից 17.09.2014թ, հայտարարված «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/16/15» ընթացակարգի հրավերի Հավելված 2–ում թույլ է տրվել տեխնիկական բնյութի սխալ՝ մատակարարման ժամկետ է սահմանվել՝ 25.01.2013թ.:

Կից Ձեզ ենք ներկայացնում Հրավերի Հավելված 2-ի ճշտված տարբերակը, և խնդրում ենք առաջնորդվել հետևյալ տարբերակով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, տնօրենի ընդունարան, մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվելու պահը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ-ի դեղագետ, գնումների համակարգող Ֆ. Հակոբյանը (հեռ. 098-04-04-30):

Հայտերը կբացվեն 2014թ. հոկտեմբերի 1-ին, ժամը 14:00-ին «Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ-ի շենքում:

Գնման առարկա է հանդիսանում Հավելված 1-ի ներկայացված բժշկական պարագաները և քիմիական նյութերը:

Մատակարարման պայմաններն են՝ ընկերության կողմից պատվերի առաքում պատվերը ընդունելուց հետո երկու օրվա ընթացքում:

«Դավիթ Անհաղթ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական պարագաների և քիմիական նյութերի (որոնք կազմված են 16 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) №1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված №5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված №6): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/16/15» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ***ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով*** /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար

առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

*Հարգանքով*

*Ա. Միսոյան*